# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2016 թվականի N 48 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 19-ի «2016 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու մասին» N498-Ն որոշման 7-րդ կետով և հիմք ընդունելով մարզի զինվորական կոմիսարների կողմից ներկայացված զորակոչային հանձնաժողովների նախնական կազմերի վերաբերյալ առաջարկությունները, **որոշում եմ՝**

1. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի քաղաքային համայնքների ղեկավարներին՝ համապատասխան զինվորական կոմիսարիատներին ապահովել 2016 թվականի ամառային զորակոչի անցկացման համար անհրաժեշտ զորակոչային տեղամասերով, սպասարկող անձնակազմերով, ինչպես նաև նյութական և ավտոտրանսպորտային միջոցներով:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքում գործող կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին՝ իրենց իրավասության սահմաններում ապահովել համակարգում աշխատող զորակոչային տարիքի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ:
3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Սյունիքի մարզային վարչությանը՝ ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասերում և զորակոչիկների անվտանգ փոխադրումը, ինչպես նաև զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումը և ներկայացնելը զորակոչային տեղամասեր:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ ապահովել տեղական զորակոչային հանձնաժողովներում բժշկական սպասարկման պատշաճ մակարդակը, հանձնաժողովների անդամ հանդիսացող բժիշկ-մասնագետների ներկայությունը, համալրումը, ինչպես նաև զորակոչիկներին տարբեր տիպի պատվաստումներ կատարելու նպատակով անհրաժեշտ քանակի դեղորայքի, պատվաստանյութերի, ֆլյուրո (ռենտգեն) ժապավենների և երևակման նյութերի հատկացումը:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի տարածաշրջանների տեղական (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների) զորակոչային հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն N1, N2, N3 և N4 հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ.մայիսի 30
ք. Կապան